

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԹԱԹՈՅԱՆ ՌՈՔԵՐՏ ԱՐԱՄԱՅԻՄԻ

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՌՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1878-1914 ՌՌ.)**

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Դեմոյան Հ.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Թունյան Վ.Գ.
պատմական գիտությունների թեկնածու
Սարգսյան Հ.Գ.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ:

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 19-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. մարտի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՃԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

1878-1914 թթ. Օսմանյան կայսրության և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանն ընդգրկող վեց նահանգների՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիի և Սեբաստիայի վիլայեթների, հայ բնակչության թվաքանակի, Արևմտյան Հայաստանի տարածքում այլ էթնիկական խմբերի համեմատ հայերի տեսակարար կշռի խնդիրը Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության բաղկացուցիչ մասերից մեկն է: Որպես Հայկական հարցի հիմնական բաղադրիչներից մեկը՝ խնդիրն ի հայտ եկավ Հայկական հարցի հետ միասին, անմիջապես այն բանից հետո, երբ Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ և այնուհետև Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածների համաձայն՝ օսմանյան իշխանությունները պարտավորվեցին «առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները»:¹

«Հայաբնակ մարզերում» բարենորոգումներ իրականացնելու պարտավորությունը ստանձնելու պահից սկսած՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ը, սպա նաև երիտթուրքական կառավարությունը, ասպարեզ հանելով նորանոր վիճակագրական տվյալներ, փորձում էին համոզել բարեփոխումների իրականացման երաշխավոր մեծ տերություններին, որ «հայաբնակ մարզեր» Օսմանյան կայսրությունում գոյություն չունեն, հայերը երկրի «արևելյան վիլայեթներում» փոքրամասնություն են կազմում: Իրենց հերթին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը և Հայկական հարցի լուծումը հետապնդող հայ ազգային կուսակցություններն ու հասարակական-քաղաքական գործիչները հակադարձում էին այդ պնդումներին՝ ներկայացնելով արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանի նահանգների ազգաբնակչության էթնիկական կազմի սեփական հաշվումները:

Արևմտահայության թվաքանակի խնդրի շուրջ ընթացող թեժ բանավեճը որոշ ժամանակակից ուսումնասիրողների կողմից բնութագրվել է որպես «վիճակագրությունների պատերազմ»,² որը շարունակվեց մինչև 1914թ.՝ Առաջին աշխարհամարտի սկիզբը, և նույնիսկ դրսևորումներ ունեցավ պատերազմից հետո՝ խաղաղության պայմանագրի շուրջ Փարիզում, Սևրում և Լոզանում ընթացող բանակցությունների ընթացքում:

Միջազգային դիվանագիտական ասպարեզից Հայկական հարցի իջնելուց հետո Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը, պահպանելով իր նշանակությունը, ձեռք բերեց նոր որակ՝ շաղկապվելով Մեծ եղեռնին գոհ գնացած հայերի թվի շուրջ ընթացող գիտական և քաղաքական բանավեճին:

1878-1914 թթ. միայն երկու մարմիններ՝ օսմանյան կառավարությունը և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, ի պաշտոնե լիազորություն և, կարևորը, գործնական լծակներ ունեին հետևողականորեն և առավել ընդգրկուն կերպով զբաղվելու արևմտահայության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքմամբ, այսինքն՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում կազմակերպել մարդահամարներ և բնակչության հաշվառումներ: Այդ առումով, արևմտահայության թվաքանակի վերաբերյալ երկու հիմնական աղբյուրների՝ օսմանյան

¹ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը մեջբերվում է ըստ *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական պոստիև քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, էջ 128:

² Տե՛ս *Social Relations in Ottoman Diyarbekir, 1870-1915*, edited by Joost Jongerden and Jelle Verheij, Leiden, Brill Academic Pub, 2012, էջ 88:

կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների, Հայկական հարցի համատեքստում հնարավորինս համալրումանի և համապարփակ ուսումնասիրությունը հրատապ է և այժմեական՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայերի թվաքանակի հետ կապված հակասական, բարդ և խճճված խնդիրների լուսաբանման, Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թվի ճշտման, ինչպես նաև Բեռլինի կոնգրեսից հետո օսմանյան պետության հակահայկական քաղաքականությունը՝ իր վիճակագրական և վարչաժողովրդագրական դրսևորումներում գիտականորեն բացահայտելու տեսակետից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության հիմնական նպատակն է արխիվային և հրատարակված վավերագրերի, ժամանակի մամուլի, ժամանակակիցների հուշերի, այլ աղբյուրների, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել և վերլուծել Օսմանյան կայսրության և, հատկապես, Արևմտյան Հայաստանի նահանգների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալները Հայկական հարցի շուրջ գործընթացների համատեքստում:

Ենելով այս հիմնական նպատակից՝ մեր կողմից դրվել են հետազոտական հետևյալ հիմնական խնդիրները.

1. Հայկական հարցի համատեքստում ներկայացնել և վերլուծել արևմտահայության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. օսմանյան կառավարության վիճակագրական տվյալները, այդ նպատակով ա) ներկայացնել և վերլուծել օսմանյան վիճակագրական համակարգը և նշված ժամանակաշրջանում օսմանյան իշխանությունների կողմից Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ կազմած հիմնական տվյալները, բ) առանձնացնել օսմանյան իշխանությունների կողմից արևմտահայության թերհաշվառումը պայմանավորած գործոնները, գ) լուսաբանել թուրքական կառավարության կողմից 1878-1914 թթ. Արևմտյան Հայաստանում իրականացվող վարչաժողովրդագրական քաղաքականության հիմնական տարրերը.
2. Հայկական հարցի համատեքստում ուսումնասիրել արևմտահայության թվաքանակի վերաբերյալ 1878-1914թթ. ընթացքում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից հավաքված և հրատարակված վիճակագրական տվյալները, այդ նպատակով ներկայացնել և վերլուծել ա) Պատրիարքարանի վիճակագրական համակարգը, բ) նշված ժամանակաշրջանում Պատրիարքարանի կողմից կազմակերպված մարդահամարներն ու հաշվառումները, դրանց հիմնական արդյունքները, դրանց արժեքը՝ որպես արևմտահայության թվաքանակի որոշման համար աղբյուր, գ) Պատրիարքարանի կողմից վիճակագրական տվյալների հավաքման վրա ազդեցություն ունեցած հիմնական գործոնները.³
3. Ներկայացնել և վերլուծել 1878-1914 թթ. Հայկական հարցի շուրջ դիվանագիտական զարգացումներում Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արժարժման գործընթացը՝ Բեռլինի կոնգրեսից մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը՝ առանձնակի կենտրոնանալով Հայկական հարցի երկու կարևորագույն

³ Վերլուծելով օսմանյան և հայկական վիճակագրական տվյալները դրանց արժանահավատության տեսանկյունից՝ մենք սակայն նպատակ չենք դրել ատենախոսության շրջանակներում հանդես գալու 1878-1914 թթ. արևմտահայության թվաքանակի վերաբերյալ սեփական հաշվումներով:

հանգրվանների՝ վիճակագրական «պատերազմի» երկու «ճակատամարտերի»⁴ վրա՝ 1878-82 թթ. բանակցություններ և 1912-14 թթ. Հայկական հարցի վերաբացման փուլ, որոնց ընթացքում արևմտահայության թվաքանակի խնդիրը հատկապես կարևորվել է:⁵

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Աշխատանքը գրելիս մենք օգտվել ենք պատմահամեմատական, պատմատիպաբանական, նկարագրողական-պատմողական և հետահայաց (սետրոսպեկտիվ) մեթոդներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԱՐԱԿԱՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ժամանակագրական առումով ատենախոսությունը հիմնականում ընդգրկում է 1878-1914 թթ., այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հարցը և դրա հետ կապված արևմտահայության թվաքանակի խնդիրը գտնվում էին միջազգային դիվանագիտության օրակարգում: Խնդիրը շարունակականության մեջ դիտարկելու նպատակով՝ հարկ եղած դեպքում անդրադարձել ենք նաև ավելի վաղ և ուշ շրջանի իրողություններին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության մեջ քննության առնված խնդիրներն իրենց ժամանակագրական ընդգրկմամբ և քննության առնվող հարցերի ամբողջականությամբ առաջին անգամ են ուսումնասիրության առարկա դառնում:

Ատենախոսության գիտական նորույթներից են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական համակարգի, Պատրիարքարանի կողմից 1878-1914 թթ. հաջորդաբար անցկացված Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի հայ բնակչության հաշվառումներն ու մարդահամարների լուսաբանումը, օսմանյան և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական համակարգերի կողմից հայ բնակչության հաշվառման վրա ազդեցություն ունեցած գործոնների առանձնացումը և ներկայացումը: Հայ պատմագրության մեջ առաջին անգամ հանգամանակից քննության է ենթարկվում Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արժարժույթը 1878-82 թթ. և 1912-14 թթ. հայկական բարեփոխումների հարցի շուրջ ընթացող դիվանագիտական գործընթացներում:

Ատենախոսության մեջ օգտագործվել է փաստաթղթերի լայն շրջանակ, առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել հիմնախնդրին վերաբերող նոր արխիվային փաստաթղթեր, այդ թվում՝ 1878-1914 թթ. վերաբերող ռուսական դիվանագիտական նամակներ, հաղորդագրություններ, զեկուցագրեր, Հայոց պատրիարքարանի՝ 1878-80 թթ. և 1913-14 թթ. անցկացված մարդահամարներին առնչվող նամակներ,

⁴ Հայկական հարցի համատեքստում Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի շուրջ հակասությունները՝ որպես «վիճակագրական ճակատամարտ», բնութագրվել է բրիտանացի ուսումնասիրող Դոնալդ Բլոքսհամի կողմից (տե՛ս Bloxham Donald, *The Great Game of Genocide: Imperialism, Nationalism, and the Destruction of the Ottoman Armenians*, Oxford, Oxford University Press, 2005, էջ 48):

⁵ Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի խնդիրն արժարժվել է նաև 1895 թ. հայկական բարենորոգումների շուրջ ընթացող դիվանագիտական գործընթացներում: Շարադրանքի ընթացքում, հարկ եղած դեպքում անդրադառնալով այդ հանգրվանին, մենք այնուամենայնիվ նպատակահարմար գտանք առանձին չլուսաբանել տվյալ փուլը՝ ելնելով այն հանգամանքից, որ Հայոց պատրիարքարանը այդ շրջանում հանդես չի եկել արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տվյալներով և, համապատասխանաբար, հայ-թուրքական բանավեճ այս խնդրի շուրջ տեղի չի ունեցել: Բացի դրանից, ելնելով 1878 թ. Բեռլինի կոնգրեսում արևմտահայության թվաքանակի վերաբերյալ օսմանյան հակադիր վիճակագրության բացակայությունից՝ մենք անդրադարձել ենք կոնգրեսին հայ պատմիչականության ներկայացրած վիճակագրական տվյալներին աշխատանքի երկրորդ գլխում:

հարցաթերթեր և այլ տվյալներ:

Բացի գիտականից, ատենախոսությունն ունի նաև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության դրույթները և եզրակացությունները կարող են օգտագործվել Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության վերաբերյալ թուրքական պատմագրության ժխտողական դրույթները հակափաստարկելու նպատակով, ինչը կարող է օժանդակել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, դատապարտման և հայ ժողովրդի կրած վնասների փոխհատուցման գործընթացին: Ատենախոսության նյութերը կարող են նաև օգտագործվել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ցուցադրության մեջ, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսումնական ձեռնարկներում, բուհերում հատուկ դասընթացների անցկացման, ինչպես նաև տվյալ բնագավառին վերաբերող այլ աշխատանքների ստեղծման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Աշխատությունը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության ու Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության բաժինների կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի տպագրած չորս հոդվածներում և գիտաժողովներում ընթերցված զեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՏԻՃԱԿԸ (ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ): Ատենախոսության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել օսմանյան և հայկական մարդահամարների տվյալները, առաջնորդարանների վիճակագրական ցուցակները, դեպքերի ժամանակակից հայ ուսումնասիրողների վիճակագրական հաշվումները, ականատես-ժամանակակիցների հուշերը,⁶ արևմտահայության թվաքանակի խնդրին հայ և օտարագի հասարակական-քաղաքական գործիչների, ուսումնասիրողների, ճանապարհորդների, դիվանագետների անդրադարձները:⁷

Ատենախոսական աշխատանքը գրելիս օգտվել ենք Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) Ամենայն Հայոց կաթողիկոսի «Հայկական հարց»,⁸ Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարարության,⁹ Արշակ Սաֆրաստյանի,¹⁰

⁶ Բդեկան Ս. և Մ., *Հարազատ պատմություն Տարօնոյ*, Գահիրե, Հրատ. հայ ազգ. հիմնադրամ, 1962: Չաւէն Արք., *Պատրիարքական յուշերու Վանքագիրներ և վկայություններ*, Գահիրե, տպ. «Նոր Աստղ», 1947: Մկրտիչեան Թ., Տիգրանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրտերու զազանութիւնները, Գահիրե, տպ. Գրիգոր Ճիհանեան, 1919: Փափազեան Վ., *Իմ յուշերը*, հ. Բ, Պոսթոլնի, «Հարեմիք», 1952: Փիրանեան Ն., *Խարբերոյի տեղերը*, Պոսթոլնի, «Պայքար», 1937:

⁷ Անդրանիկ, *Տէրխիւ: Ճանապարհորդութիւն և տեղագրութիւն*, Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանցի, 1900: Սարգսյանց Լ., *Լյց Թիւրքաց Հայաստանին*, Թիֆլիս, Մ. Դ. Ռօտինեանց, 1890: Տաշեան Հ. Հակովբոս Վ., *Հայ բնակչությունը Սև ծովին մինչև Կարին*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1921: Տևկանց Ա., *Լյցերություն ի Հայաստան 1878 թ.*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985: Տևկանց Ե., *Ճանապարհորդություն Բարձր Հայք և Վասպուրական 1872-1873 թթ.*, Երևան, ԳԱ հրատ., 1991: Бекгульянц Р., *По Турецкой Армении. Впечатления отъ поѣздки лѣтомъ въ 1914 году*, Ростов на Дону, Типъ. Я.М. Исидарова, 1914. Линчъ X.Ф.Б., *Арменія. Путевыя очерки и этюды*, т.2, *Провинціи*, Тифлисъ, Изд. Торгъ. дома "И.Е. Пнтоевъ и Ко". Типъ. М. Мартиросянца, 1910, Термень Р. Т., *Отчетъ о полевоы поѣздкѣ 1907 года въ Ванскомъ, Битлисскомъ и Діарбекирскомъ вилайетахъ*, Тифлисъ, Типъ. Штаба Кавказскаго военнаго Округа, 1909.

⁸ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, 35, 49, 123, 126, 139, 140, 142, 146, 159, 161-165:

⁹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193/II, 270, 667:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1856:

Ազգային պատվիրակության,¹¹ Համաերթաստահայերի վերաշինաց հայրենակցական միության,¹² «Փաստաթղթերի հավաքածու Հայկական հարցի վերաբերյալ»,¹³ Մկրտիչ Ներսիսյանի¹⁴ ֆոնդերի նյութերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվի Թ. Ազատյանի ֆոնդի փաստաթղթերից:¹⁵

Մենք նաև հնարավորություն ենք ունեցել ծանոթանալու Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի 1913-14 թթ. մարդահամարի նյութերին (հարցաթերթերի նմուշներ, առաջնորդարանների նամակներ և այլն), որոնք պահվում են Փարիզի ՀԲԸՄ Նուբարյան գրադարանում:¹⁶

Թեմայի լուսարանման համար առաջնային արժեք են ներկայացնում 1878-1914 թթ. Հայկական հարցի ընթացքին վերաբերող անգլիական, ռուսական, գերմանական, ֆրանսիական և իտալական ինչպես տպագրված,¹⁷ այնպես էլ դեռևս անտիպ¹⁸ դիվանագիտական փաստաթղթերը:

Մենք յայնորեն օգտագործել ենք բացառիկ աղբյուրագիտական արժեք ներկայացնող արևմտահայ և արևելահայ մամուլի նյութերը («Արարատ», «Արևելյան մամուլ», «Բյուզանդիոն», «Ժամանակ», «Հորիզոն», «Մասիս», «Մեղու Հայաստանի», «Մուրճ», «Փորձ» և այլն):

Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի հարցը հայտնվում է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից և Սան Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերի ստորագրումից անմիջապես հետո: Արձագանքելով խնդրի այժմեականությանը՝ մի շարք հեղինակներ, այդ

¹¹ ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 246, 1323, 1325, 1358, 1398, 1410, 1416, 1421:

¹² ՀԱԱ, ֆ. 439, ց. 1, գ. 483:

¹³ ՀԱԱ, ֆ. 450, ց.2, գ. 6, 11:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 529, 556, 565, 587:

¹⁵ ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, բաժին 3, վավերագրեր 39, 42, 47, 57, 59:

¹⁶ ABC/BNu, DOR 2/2, ff. 17, 30, DOR 3/2, ff. 31, 32, 47,48, DOR 3/3, ff. 34-36, 49-52, DOR 3/4, ff. 4, 12, 13, 17, 18, 21, 28, 31.

¹⁷ Տե՛ս Բուպիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923թթ., հ. Ա, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգ. ին-տ հրատ., 2008. Լեօ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 1915. Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ.՝ Մ. Ներսիսյան, կազմ.՝ Մ. Գ. Ներսիսյան, Ռ. Գ. Սահակյան, Երևան, «Հայաստան», 1991. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Երևան, «Հայաստան», 1972. Сборник дипломатических документов. Реформы в Армении (26 ноября 1912 г.-10 мая 1914 г.), Петроград, Гос. тип., 1915; Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. Сборник. Составитель, отв. редактор, автор предисловия, введения и примечаний доктор исторических наук, профессор В. Микаелян, Ереван, Гитутюн, 1995; Armenia. Political and Ethnic Boundaries, 1878-1948, edited by Burdett Anita L.P., Chippenham, Archive ed., 1998; Great Britain, Foreign Office, Blue Book: Turkey. 1896, No. 1 (Correspondence Respecting the Introduction of Reforms in the Armenian provinces of Asiatic Turkey), London, Harrison and Sons, 1896; British Documents on Ottoman Armenians, vol. 1, Ankara, Türk Tarih kurumu, 1982, vol. 2, Ankara, Türk Tarih kurumu, 1983; Documents Diplomatiques, Affaires Arméniennes: Projet de Réformes dans l'Empire ottoman 1893-1897, Paris, Imprimerie Nationale, 1897.

¹⁸ Այսպես, օգտվել ենք ՀԱԱ Մ. Ներսիսյանի ֆոնդից (ֆ. 818), որտեղ պահվում են Ռուսաստանի ԱԳՆ գլխավոր արխիվից պատճենված 1878-1914 թթ. Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության վիճակի, Հայկական հարցին վերաբերող ռուսական դիվանագետների քաղմաթիվ զեկուլագրեր:

թվում՝ Ա. Երիցյանը (1880թ.),¹⁹ Ս. Ավետիսյանը (1890 թ.),²⁰ Ե. Թոփչյանը (1909 թ.),²¹ «Ոսկան Կոմիտեն» (1902 թ.),²² Ա. Պիպեռճյանը (1913 թ.),²³ Գ. Չոհրապը (1913 թ.),²⁴ Ա.-Դոն (1912 թ.),²⁵ Հ. Առաքելյանը (1913 թ.),²⁶ հանդես են գալիս Արևմտյան Հայաստանի բնակչության ազգագրական կազմի վերաբերյալ առանձին ուսումնասիրություններով: Մամուլում լույս են տեսնում հայ լրագրության ականավոր գործիչներ Գրիգոր Արծրունու («Մեղու Հայաստանի», «Մշակ»), Բյուզանդ Քեչյանի («Մասիս»), Մատթեոս Մամուրյանի («Արևելյան մամուլ»), Միսաք Գոչուկյանի («Ժամանակ») հոդվածները: Խնդրո առարկա հարցին անդրադարձների թիվը կտրուկ աճում էր հատկապես Հայկական հարցի սրման ժամանակաշրջաններում՝ 1878-82, 1894-96 և 1912-14 թթ.: Այս շրջանում հրատարակված ուսումնասիրությունները և հայկական մամուլում գետեղված վիճակագրական տվյալները նաև օժտված են կարևոր աղբյուրագիտական նշանակությամբ:

Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի խնդիրը հայ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է մնում նաև Առաջին համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Հայկական դիվանագիտությունը, 1919-1923 թթ. պայքար մղելով միասնական հայկական պետության կազմավորման, իսկ այնուհետև՝ Լոզանի կոնֆերանսի ժամանակ, Թուրքիայի տարածքում առանձին հայկական ինքնավար օջախի ստեղծման համար, հիմնավորում էր իր պահանջները՝ մատնանշելով նաև նախքան Մեծ եղեռնը այնտեղ հոծ հայկական ներկայություն ունենալու, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում արևմտահայության կրած մարդկային և նյութական կորուստների փաստարկները: Արևմտահայության թվաքանակի հարցերը և այդ առումով՝ օսմանյան պաշտոնական և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալներն արծարծվում են 1919 թ. փետրվարի 18-ին Հայոց պատվիրակության կողմից Փարիզի հաշտության վեհաժողովին ներկայացված հուշագրում²⁷ և Ազգային պատվիրակության այլ հրատարակություններում:²⁸ Հուշագրերի և այլ փաստաթղթերի պատրաստմանը Ազգային պատվիրակությունը ներգրավում է մի շարք հայ ուսումնասիրողների, այդ թվում և Նիկողայոս Ադոնցին:

¹⁹ Ерицов А., *Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении*, Тифлис, Тип. Глав. Упр. Наместника Кавказскаго, 1881.

²⁰ Մ. Ա., *Թուրքիայի հայերն և իրենց դրացիներ*, Մարսել, տպ. Մ. Փորթուգալեանի, 1890:

²¹ Թոփչյան Ե., *Երիտասարդ Թուրքիան և հայերը, մասն առաջին*, Թիֆլիս, «Շրօմա», 1909:

²² Ոսկան Կոմիտե №6, *Վիճակագրական տեղեկություններ տանկսիսիայի մասին*, աս.տ. 1902:

²³ Պիպեռճյան Ա., *Օսմանեան պետություն*, Կ. Պոլիս, «Հայրենիք», 1913:

²⁴ Leart Marcel, *La question Armenienne a la lumiere des documents*, P., Challamel, 1913.

²⁵ Ա.-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները*, Երևան, տպ. «Կուլտուրա», 1912:

²⁶ Аракелян А.А., *Статистика армянскаго населения Малой Азии: Доклад, прочитанный в Общем собрании членов Кавк. Отд. И.Р.Г.О. 22 мая 1913 г.*, Тифлис, Тип. К.П. Козловскаго, 1914.

²⁷ Տե՛ս Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, «Աշխատանք», 1919:

²⁸ Տե՛ս *Reponse au Memoire de la Sublime-Porte en date du 12 fevrier 1919*, Constantinople, 1919 (տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 6), *Tableau approximatif des reparations et indemnites pour les dommages subis par la nation armeniennne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase*, Paris, 1919, նաև *Population Armenienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat Armenienne de Costantinople*, Paris, Turabian, 1920, նաև Poghos Nubar, *The Pre-War Population of Cilicia*, Paris, 1920 (ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 1325, թթ. 34-39): Լոնդոնի վեհաժողովի համար (մարտ 1920) Հայկական պատվիրակության պատրաստած տեղեկագրերը (ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 1325, թթ. 1-56), Լոզանի վեհաժողովին հայկական պատվիրակության ներկայացրած հուշագիրը (ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 1358, թթ. 3-32), նաև *L'Armenie et La Question Armenienne Avant, pendant et depuis la guerre*, Paris, 1922:

Անվանի պատմաբանն իր «Հայաստանի սահմանների խնդիրը» գրության մեջ և Ազգերի լիգայի գերագույն խորհրդին տրվելիք հուշագրի նախագծում քննադատության է ենթարկում օսմանյան պաշտոնական վիճակագրության տվյալները, օսմանյան վիճակագրական տարբեր ցուցակների համեմատական վերլուծության միջոցով բացահայտում է դրանցում տեղ գտած անճշտությունները և հակասությունները:²⁹

Հայկական հարցի համատեքստում Օսմանյան կայսրության և Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի խնդիրն 1919-1920 թթ. անդրադառնում են մի շարք հայ հեղինակներ, որոնցից արժանահիշատակ են Չիթուռին և Գևորգ Մետրոպոլ:³⁰

1923 թ. հետո, երբ Հայկական ազգային օջախի ստեղծման ուղղությամբ Ազգային պատվիրակության ջանքերը վերջնականապես ձախողվում են, 1878-1914 թթ. արևմտահայության թվաքանակի խնդիրը տեղափոխվում է պատմագիտական հետազոտությունների դաշտ:³¹ 1950-70-ական թթ. խնդիրն սկսում են անդրադառնալ Հայոց ցեղասպանությանը և Հայկական հարցով զբաղվող նաև խորհրդահայ ուսումնասիրողներ,³² իսկ 1965 թ.՝ Մեծ եղեռնի 50-ամյակից հետո, հանդես են գալիս մի քանի հետազոտողներ, որոնք հարցը լուսաբանում են Հայոց ցեղասպանությանը գոհ գնացածների թիվը որոշելու նպատակից ելնելով:³³

Հայ պատմաբան Երվանդ Մարգարյանը 1970 թ. լույս տեսած «Օսմանյան կառավարության վարչական և ժողովրդագրական քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում» իր հոդվածում, լայնորեն օգտագործելով թուրքական, եվրոպական, հայկական և ռուսական աղբյուրների տվյալները, ներկայացնում է օսմանյան կառավարության հակահայկական ժողովրդագրական քաղաքականության հիմնական գծերը:³⁴

19-րդ դարի վերջերին Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ ռուս և եվրոպացի որոշ հեղինակների վիճակագրական տվյալները քննական վերլուծության են ենթարկվել Սուրեն Մարկոսյանի կողմից:³⁵ Արևմտահայության թվաքանակի խնդիրն մաս կազմող առանձին հարցերով 1970-80-ական թթ. զբաղվել և

²⁹ Տե՛ս Ադոնց Ն., *Հայաստանի սահմանների խնդիրը*, Ադոնց Ն., *Հայկական հարց*, Երևան, 1994, էջ 137-143, նույնի՝ *Գերագույն խորհրդին տրվելիք հիշատակագրի նախագիծ* (ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ. 246, թ. 15-20):

³⁰ Տե՛ս Չիթուռնի, *Հուշիկը Հայաստանի*, Կ.Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1919: Նույնի՝ *Ան ու իս Հայաստանի*, Կ.Պոլիս, տպ. Կ. Քելչեան որդի, 1920: Մետրոպ Ք., *Հայաստան: Աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական և մշակութային տեսակետներով: Իրացրած ազգ. խորհրդակց. ժողովի «Փաստաթուղթերու յանձնախումբ»* էն, Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1919:

³¹ Տե՛ս մասնավորապես Sarkissian A. O., *History of the Armenian question to 1885*, Urbana, Ill., University of Illinois press, 1938:

³² Նշենք մասնավորապես Արզումանյան Մ. Վ., *Հայաստան 1914-1917*, Երևան, «Հայաստան» հրատ., 1969, էջ 18-19: Կիրակոսյան Ջ. Ս., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ.*, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, էջ 43-46:

³³ Տե՛ս Խաթանասեան Ե., *Հայոց թիր*, Բոսթոն, Հրատ. Եղեռնի 50-ամեակի կեդր. յանձնախումբի, 1965: Տե՛ս նաև Համբարյան Ա., *Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ*, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 98-114:

³⁴ Տե՛ս Տարկսյան Ե.Կ., *Административная и демографическая политика Османского правительства в Западной Армении*, Страны и народы Ближнего и Среднего Востока т.V Турция, Ереван, 1970, էջ 357-380: Նույնի՝ *Аграрная политика Османского правительства в Западной Армении*, Ереван, «Айпетрат», 1957. Նույնի՝ *Политика Османского правительства в Западной Армении и державы в последней четверти XIX и начале XX вв.*, Ереван, Изд-во АН АрмССР, 1972:

³⁵ Տե՛ս Մարկոսյան Ս., *Արևմտահայության վիճակը XIX դարի վերջերին*, Երևան, «Հայաստան» հրատ., 1968:

արժեքավոր հողվածներ է թողել հայ պատմաբան Հայկազուն Գալստյանը:³⁶ 1970-ական թթ. ցայսօր տվյալ խնդրով է զբաղվում սփյուռքահայ հեղինակ Մարգիս Կարայանը:³⁷

Հայկական հարցի համատեքստում արևմտահայության թվաքանակի խնդրին անդրադարձել է և անվանի սփյուռքահայ պատմաբան Վահագն Դադրյանը:³⁸

Ժամանակակից սփյուռքահայ ուսումնասիրողներից խնդրո առարկա հարցով զբաղվել է Լևոն Մարաշյանը:³⁹

Հայ պատմաբանների վերջերս յույս տեսած ուսումնասիրություններից, որոնց մեջ անդրադարձ կա արևմտահայության թվաքանակի խնդրին, կարելի է առանձնացնել Գալուստ Գալոյանի «Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.) մենագրությունը»⁴⁰ և Ստ. և Կ. Պողոսյանների «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» ուսումնասիրությունը:⁴¹

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1913-14 թթ. մարդահամարի տվյալների հիման վրա Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի բնակավայր առ բնակավայր պատկերն են տալիս ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռ. Գևորգյանը և Փ. Փարուջյանը:⁴²

1980-90-ական թթ. հայաստանյան պատմագիտության մեջ հանդես են գալիս մի շարք ուսումնասիրողներ, որոնք մասնավորապես զբաղվում են Արևմտյան Հայաստանի առանձին նահանգների, գավառների և գավառակների վարչաժողովրդագրական հարցերով: Նշված ուղղությանը պատկանող հեղինակներից Հայկական հարցի համատեքստում արևմտահայության թվաքանակի խնդրի տարբեր ասպեկտներին իրենց

³⁶ Տե՛ս Գալստյան Հ. Հ., *Թուրքիայի Արևելյան վիլայեթների դեմոգրաֆիայի և տնտեսության մի քանի հարցեր (Առաջին համաշխարհային պատերազմից հետո)*, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, X Թուրքիա, Երևան, 1979, էջ 35-70. Նույնի՝ *Արևմտյան Հայաստանի բնակչության սազային կազմը՝ ըստ Վիլոյա Բիննի վիճակագրության*, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 59-79: Մենք ծանոթացել ենք նաև հեղինակի՝ ՀԱԱ-ում պահվող անձնական արխիվի նյութերին (ՀԱԱ, ֆ. 476):

³⁷ Տե՛ս Karayan Sarkis Y., *An Inquiry Into the Statistics of the Turkish Genocide of the Armenians 1915-1918*, «The Armenian Review», №25, Winter 1972, էջ 3-43: Նույնի՝ *Demography of Van Province, 1844-1914*, Armenian Van/Vaspurakan, edited by Richard G. Havhannisian, N.Y., Mazda Publishers, 2000, էջ 195-208, Նույնի, *The Fate of the Armenians in the Ottoman Empire and Republican Turkey: From 1828 to 2000. A Demographic Research Study*, «Massis Weekly», April 24, 2010: Սփյուռքահայ ուսումնասիրողներից արևմտահայության թվաքանակի հարցին անդրադարձել են նաև Կ. Չիչեկյանը (տե՛ս Chichekian G., *The Armenians since the Treaty of San Stefano: A Politico-Geographic Study of Population*, The Armenian Review, 1968 №2 (82), էջ 42-56) և Լ. Չորմիսյանը (տե՛ս Չորմիսեան Լ., *Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմության*, հ. Ա, 1850-1878, Պեյրոյթ, ա.հ., 1972):

³⁸ Տե՛ս մասնավորապես Dadrian Vahakn N., *Warrant for Genocide. Key Elements of Turko-Armenian Conflict*, New Brunswick (USA) and London (U.K.), Transaction Publishers, 1999, էջ 137-147:

³⁹ Տե՛ս Marashlian L., *Politics and Demography. Armenians, Turks, and Kurds in the Ottoman Empire*, Cambridge, MA- Paris-Toronto, Zoryan Institute, 1991:

⁴⁰ Տե՛ս Գալոյան Գ., *Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917թ.)*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 2004:

⁴¹ Տե՛ս Պողոսյան Ստ., Պողոսյան Կ., *Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն*, հ.1, Եր., ՀՀ ՊՆ գործ. կառ. տպ., 2000: Հեղինակներն առանձին գլուխ են նվիրել հարցի ներկայացմանը՝ վերնագրելով այն «Վիճակագրական գեոցոգի» (էջ 201-231):

⁴² Տե՛ս Kévorkian R. and Paboudjian P. B., *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide*, Paris, ARHIS, 1992: Տե՛ս նաև Kevorkian R., *The Armenian Genocide. A Complete History*, I.B.Tauris & Co Ltd, London-New York, 2011):

աշխատանքներում անդրադառնում են Գեղամ Բադալյանը⁴³ և Աշոտ Մելքոնյանը:⁴⁴

1920-ական թվականներից հիմնականում հայրենակցական միությունների կողմից սփյուռքում սկսում են հրատարակվել բազմաթիվ հատորներ՝ նվիրված Արևմտյան Հայաստանի տարբեր շրջանների կամ բնակավայրերի պատմության ուսումնասիրությանը: Դրանցում որոշակի տեղ է հատկացված նաև ժողովրդագրական հարցերի լուսաբանմանը, երբեմն զետեղվում են խնդրին վերաբերող սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող փաստաթղթեր և վկայություններ: Այդ հրատարակություններից ատենախոսության մեջ օգտագործել ենք (ըստ այբբենական կարգի)՝ Ա. Ալադյանյանի, Թ. Արապյանի, Գ. Գեորգյանի, Ե. Չարդարյանի, Ս. Ծերոնի, Ս. Ծոցիկյանի, Վ. Համբարձումյանի, Ա. Հայկազի, Հ. Հովակիմյանի, Հ. Հուրանյանի և Ս. Հանյանի, Ղազար-Չարզգի, Հ. Ղազարյանի, Ս. Ճիգմեճյանի, Գ. Մելիտինեցու, Պ. Մինասյանի, Գ. Մխիթարյանի, Ս. Պարսամյանի, Ա. Պողոսյանի, Գ. Սիմոնյանի, Գ. Սյուրմենյանի, Վահե Հայկի, Ա. Փոլատյանի, Ա. Քեչեյանի աշխատասիրությունները:⁴⁵

⁴³Տե՛ս մասնավորապես Բադալյան Գ. Մ., Վանի նահանգը 1840-ական-1914թթ. (վարչաքաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն), «Բանբեր Երևանի համալսարանի», 1986, № 3, էջ 13-28: Նույնի՝ Վանի նահանգի հայաբնակ բնակավայրերի ցուցակներն ըստ առանձին գավառակների և գյուղախմբերի, «Բանբեր Երևանի համալսարանի», 1987, №2, էջ 83-110: Նույնի՝ Մոյրանական կառավարության վարչաժողովրդագրական քաղաքականությունը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմություն, հ. III. Նոր ժամանակաշրջան, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ): Նույնի՝ Արևմտահայության թվաքանակի ճշգրտման որոշ սկզբունքներ (Էրզրումի և Վանի վիլայեթների օրինակով), «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները» հայագիտական միջազգային համաժողովի (Երևան, 2003, 15-20 սեպտեմբեր) զեկուցումների դրույթներ, Երևան, 2003, էջ 137-142: Նույնի՝ Կ. Պոսի Հայոց պատմության 1912 թ. վիճակագրության տվյալների քննությունը (Վանի սանջակի օրինակով), Հայաստանի մայրաքաղաքները, Գիրք I, Վան, ՀՀ ԳԱԱ հնագիտ. և ազգ. ին-տ, Երևան, «Գիտություն» հրատ., 2013, էջ 153-157: Նույնի՝ Էրզրումի վիլայեթի որոշ կազանների հայ բնակչության թվաքանակի ճշգրտման ըստ Արևելեան Հայաստանում սպաստանած արևմտահայ գաղթականների 1914-1915ին կազմումս վիճակագրական ցուցակների, Հայկազեան Հայագիտական Հանդես, Պեյրութ, 2000, էջ 207-224:

⁴⁴ Տե՛ս Մելքոնյան Ա., Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դարի առաջին երեսնամյակին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 1994: Նույնի՝ Ժողովրդագրական գործընթացների միտումները Էրզրումի նահանգում (XVI դ. - XX դ. սկիզբ), «Պատմա-բանասիրական հանդես», 2000, № 2-3, էջ 122-129: Նույնի՝ Պատմական ժողովրդագրությունը հայագիտության կարևոր բնագավառ, «Հայագիտության արդի վիճակը և նրա զարգացման հեռանկարները» հայագիտական միջազգային համաժողովի (Երևան, 2003, 15-20 սեպտեմբեր) զեկուցումների դրույթներ, Երևան, 2003, էջ 56-57: The Demography of the Province of Erzerum: Sixteenth-Twentieth Centuries, *Armenian Karin/Erzerum*, Edited by Richard G. Hovannisian, Mazda Publishers, Costa Mesa, California, 2003, pp. 135-147:

Նշենք նաև Ա.Բաբլումյանի (տե՛ս Բաբլումյան Ա., Արևմտյան Հայաստանի Խաղաղության հայ ազգաբնակչությունը XIX դարի վերջերին – XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), ատենախոսության սեղմագիր, Երևան, 2012), Հ. Չատիկյանի (Չատիկյան Հ., Կարինի նահանգը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2013, Չատիկյան Հ. Գ., Կարինի (Էրզրումի) նահանգի Դիալիի գավառակը (XIX դ. երկրորդ կես), «Պատմա-բանասիրական հանդես», № 2, էջ 87-92, Չատիկյան, Հ. Գ., Կարինի նահանգի Դերջանի գավառակը XIX դ. երկրորդ կեսին, «Լրաբեր Հասարակական Գիտությունների», 2004, № 2, էջ 116-124), Ա. Միքայելյանի (Միքայելյան Ա. Վան քաղաքի բնակչությունը (XIX դարի վերջին քառորդ-XX դարի սկիզբ), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, №8, էջ 36-42) և Ա. Սահակյանի (Սահակյան Ա., Սեբաստիայի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, Երևան, ա. հ., 2005) հետազոտությունները:

⁴⁵ Ալադյանյան Ա., Պատմություն Երուկոյի հայոց: Տեղագրական, պատմական և ազգագրական տեղեկություններով, Գահիրե, տպ. «Նոր աստղ», 1952: Ալադյանյան Ա., Պատմություն Մալաթիոյ

Արևմտահայության թվաքանակի խնդիրը յուրահատուկ տեղ է զբաղում ժխտողական ուղղությանը պատկանող պատմաբանների՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության նենգափոխումների շարքում: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում ապրող հայերի թվաքանակի խնդիրը թուրք պատմաբաններից առաջինը հանգամանակից քննել է Էսաստ Ուրասն իր «Հայերը պատմության մեջ և Հայկական հարցը» ծավալուն աշխատությունում:⁴⁶

Արևմտյան ժխտողական ուսումնասիրողներից աչքի է ընկնում Սթենֆորդ Շոուն, որը վայելում է թուրքական պատմության խոշոր մասնագետներից մեկի համբավը: Ս. Շոուի գրչին են պատկանում նաև օսմանյան ժողովրդագրությանը և վիճակագրական համակարգին առնչվող մի քանի ուսումնասիրություններ:⁴⁷

հայոց: Տեղագրական, պատմական և ազգագրական, Պլյուրոթ, հրատ. Մալաթիոյ կրթասիրաց ը-թեան, 1961: Արապեան Թ. (Մեւերակցի), *Յուշամատենան Սևերակի*, Պլյուրոթ, տպ. «Մեւան», 1971, 504 էջ: Գեորգեան Գառնիկ, *Չերուշապատում: Բնական պատմություն Հայոց Չերուշի*, հ. Ա, Տեղագրական-պատմագրական-մշակութային-բանասիրական-ազգագրական, Երուսաղեմ, տպ. Ս. Յակոբեանց, 1970: Չարդարեան Ե., *Պատմագիրք Տիլիկի քաղաքի*, Պլյուրոթ, տպ. Համազգայինի Վահէ Մելեան, 1972: Ծերօն Մանուկ Պ., *Բարջանն գիտ. Համայնապատում (1600-1937)*, Պոստոն, տպ. «Պայքար», 1938: Ծոցիկեան Ս.Ս., *Արևմտահայ աշխարհի*, Նիւ Եորք, տպ. Ա.Յ. Լէյկեան, 1947: Համբարձումեան Վ., *Գյուղաշխարհի պատմական, ազգագրական ուսումնասիրություն*, Փարիզ, Կովտունի, 1927: Հայկ Վահե, *Խարբերոյ եւ անոր ոսկեղէն դարերը*, Նիւ Եորք, ա.տ., 1959: Հայկազ Արամ, *Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը*, Նիւ Եորք, ա.հ., 1957: Հոլանեան Հ. Յարութիւն վ., Հանեան հ. Մատթեոս Վ., *Յուշամատենան Խոտորջուրի*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1964: Յովակիմեան Յ., *Պատմություն հայկական Պոնտոսի*, Պլյուրոթ, «Մշակ», 1967: Ղազար-Չարբզ, *Յուշամատենան Բարձր Հայքի Կարհնապատում*, Պլյուրոթ, Մշակ, 1957: Ծիգմեան Ս., *Խոսքերոյ եւ իր գաւակներոյ*, Ֆրեզնոյ, ա. հ., 1955: Մելիտինեցի Գ., *Նախնիներ (1915-1918): Պատմական ակնարկ մը: Մալաթիոյ աշխարհագրական դիրքը, կլիման եւ արտադրությունը: Մալաթիոյ հայրյեան 1895-ի ինքնապաշտպանությունն կրոնները: Մալաթիոյ հայրյեան բնաջնջումն ու տեղահանությունը*, Պոստոն, տպ. «Հայրենիք», 1929: Մխիթարեան Գ., *Մեր գիտը Դատն*, Պոսթըն, տպ. «Հայրենիք», 1958: *Պատմագիրք Կիլիկի*, պատասխանատու խմբագիր՝ Պետրոս Մինասեան, Պլյուրոթ, տպ. «Մեւան», Կիլիկիի հայրենակց. միութ. հրատ., 1974: *Պատմագիրք Չնշկածագի*, դասաւորեց եւ խմբագրեց Հայկազն Գ. Ղազարեան, Պլյուրոթ, տպարան «Համազգային», 1971: Պարսամեան Սարգիս, *Յուշարձան Չերմուկի*, Պոսթըն, «Համազգային», 1969: Պոդոսեան Ա.Գ., *Բազմաշէնի բնաջնջումն պատմությունը իր հիմնարկությունն մինչև վերջին օրերը*, Պոստոն, տպ. «Պայքար», 1930: Սիմոնեան Գ.Յ., *Յուշամատենան Պոնտոսական Ամասիոյ*, Վենետիկ, ա. հ., 1966: Սիւրմեան Գ., *Երզնկա*, Գահիրէ, տպարան «Սահակ-Մետրոպ», 1947: Փոլատեան Ա., *Պատմություն Հայոց Արաբկիրի*, Նիւ Եորք, Ամերիկայի Արաբկիրի միութ. հրատ., 1969: *Ալեյ եւ ակնցիք*, կազմ.՝ Ա.Քէշեան, աշխատասիր., դասաւորեց եւ խմբ.՝ Ս. Պարսամեան, Փարիզ, Հրատ. Ամերիկայի Ալեմայ հայրենակց. մ-թյան, 1952:

⁴⁶ St' u Uras E., *The Armenians in History and the Armenian Question*, Ankara, Documentary Publications, 1988:

Արևմտահայության թվաքանակի խնդիրն անդրադարձած թուրքական ժխտողական պատմագրության նմուշներից են՝ Gürün Kamuran, *The Armenian Case: The Myth of Innocence Exposed*, Nicosia and London: K. Rustem and Brother and Weidenfeld and Nicolson, 1985; Şaşmaz Musa, *The Distortion of the Population Data for National Causes by the Greeks, Bulgarians and Armenians in the Late 19th and Early 20th Centuries*, *Journal of The Center for Ottoman Studies*, Ankara University, 1995, №6, էջ 307-317; Խոյնի՝ *The Ottoman Censuses and the Registration Systems in the Nineteenth and Early Twentieth Centuries*, *Journal of The Center for Ottoman Studies*, Ankara University, 1995, №6, էջ 289-305; Mutlu Servet, *Late Ottoman Population and Its Ethnic Distribution*, *Turkish Journal of Population Studies*, 2003, №25, էջ 3-38:

⁴⁷ St' u Shaw Stanford J. and Shaw Ezel Kural, *History of the Ottoman Empire and Modern Turkey*, vol.2, N.Y., Cambridge University Press, 1977; Shaw Stanford J., *The Ottoman Census System and Population, 1831-1914*, *IJMES*, 1978, № 9, էջ 325-338; Shaw Stanford J., *Ottoman Population*

1970-ական թթ. հանդես է գալիս օսմանյան վիճակագրությամբ զբաղվող թուրք պատմաբան Քեմալ Կարպատը իր «Օսմանյան բնակչության հաշվառումը և 1881/82-1893թթ. մարդահամարը» հոդվածով և «Օսմանյան բնակչությունը 1830-1914թթ. ժողովրդագրական և սոցիալական բնորոշումներ» ուսումնասիրությամբ:⁴⁸

1980-ական թթ. Օսմանյան կայսրության պատմական ժողովրդագրությանը նվիրված մի շարք ուսումնասիրություններով հանդես է գալիս ամերիկացի պատմաբան Ջապոնի Մաք-Բարթին:⁴⁹ Ուսումնասիրողի խնդրո առարկա հարցին նվիրված հոդվածները և 1983 թ. հրատարակված «Մահմեդականները և փոքրամասնությունները. Օսմանյան Անատոլիայի բնակչությունը և կայսրության վերջը» գիրքը աչքի են ընկնում բազմաթիվ սխալներով և իրականությանը չհամապատասխանող պնդումներով, որոնք հետևանք են ինչպես հեղինակի անտեղյակության, այնպես էլ միտումնավոր ենեզավոլիման:⁵⁰

Պետք է նշել, որ վերջին շրջանում որոշ թուրք պատմաբաններ ավելի հավասարակշռված մտտեցում են որդեգրել խնդրո առարկա հարցի նկատմամբ՝ հրաժարվելով հավաստի համարել հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան վիճակագրական տվյալները: Դրանցից են, մասնավորապես, Ֆուաթ Դյունդարը,⁵¹ Ուդուր Ունգորը⁵² և Թաներ Աքչամը:⁵³

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 188 էջ:

Ներածության մեջ հիմնավորվում են ընտրված թեմայի գիտական նշանակությունը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական, կիրառական նշանակությունը, ներկայացվում է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Movements during the Last Years of the Empire, 1885-1914, Journal of the Ottoman Studies, №1, 1980, էջ 191-205:

⁴⁸ Տե՛ս Karpat Kemal H., Ottoman Population Records and the Census of 1881/82-1893, *IJMES*, № 9, 1978, էջ 237-274. Karpat Kemal H., *Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics*, Wisconsin, The University of Wisconsin Press, 1985.

⁴⁹ Տե՛ս McCarthy Justin, *The Arab World, Turkey, and the Balkans (1878-1914): A Handbook of Historical Statistics*, Boston, Mass, 1982. McCarthy Justin, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire*, N.Y. University Press, 1983. Նաև՝ McCarthy Justin, *The Anatolian Armenians, 1912-1922*, Armenians in Ottoman Empire and Modern Turkey Istanbul, 1984:

⁵⁰ Ամերիկացի ուսումնասիրողի որոշ դրույթներ քննադատության են ենթարկվել սփյուռքահայ ուսումնասիրող Լևոն Մարաշլյանի կողմից (տե՛ս Marashlian L., *նշվ. աշխ.*, էջ 1-59): Ժողովրդագրության բնագավառում թուրք և ամերիկյան ժխտողականների քննադատությունը տե՛ս նաև՝ Թաթոյան Ռ.Ա., Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը թուրքական պատմագրության մեջ, «*Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր*», № 5, 2002: Hovannisian R.G., The Critic's View: Beyond Revisionism, *IJMES*, №9, 1978, էջ 379-388; Махмурия Г.Г., Тема геноцида армян в американской историографии (1985-1994), *Историко-филологический журнал*, №1, 1995, էջ 39-52, №2, էջ 21-32:

⁵¹ Տե՛ս Dündar Fuat, *Crime of Numbers. The Role of Statistics in the Armenian Question*, The State University of New Jersey-Rutgers, Transactions Publishers, 2010:

⁵² Տե՛ս մասնավորապես՝ Ու. Ունգորի կարծիքը Դիարբեքիի նահանգի բնակչության թվաքանակի վիճակագրական տվյալների վերաբերյալ՝ Ungor U.U., *The Making of Modern Turkey: Nation and State in Eastern Anatolia, 1913-1950*, Oxford, Oxford University Press, 2011, էջ 16:

⁵³ Տե՛ս մասնավորապես՝ Akçam Taner, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton University Press, 2012, էջ 255:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Հայկական հարցը և արևմտահայության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության վիճակագրությունը», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակն ըստ 1831-1878 թթ. օսմանյան վիճակագրական տվյալների», խոսվում է արևմտահայության թվաքանակի վերաբերյալ 1831-1878 թթ. տվյալների, օսմանյան իշխանությունների կողմից արևմտահայության հաշվառման եղանակների և թվաքանակի որոշման մեթոդների մասին:

«Արևմտահայության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. օսմանյան տվյալները: Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների վարչաժողովրդագրական քաղաքականությունը» ենթագլխում ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Օսմանյան կայսրության և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914 թթ. ընթացքում անցկացված օսմանյան պաշտոնական մարդահամարների տվյալները: Սահմանվում և ներկայացվում են 1878-1914 թթ. ընթացքում Աբդուլ Համիդ II-ի և երիտթուրքական կառավարության կողմից Արևմտյան Հայաստանում իրականացվող վիճակագրական և վարչաժողովրդագրական քաղաքականության հիմնական տարրերը՝ Օսմանյան իշխանությունների կողմից Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության վիճակագրության խեղաթյուրումը, մահմեդական տարբեր էթնիկ խմբերին որպես միատարր զանգված ներկայացնելը, Արևմտյան Հայաստանի վիլայեթների վարչական սահմանների վերաձևումները, Արևմտյան Հայաստանում մահմեդական վերաբնակիչների՝ մուհաջիրների բնակեցումը:

Երրորդ ենթագլխում, որի վերնագիրն է «Օսմանյան վիճակագրական համակարգի կողմից արևմտահայության թերհաշվառման առարկայական գործոնները», սահմանվում և քննության են ենթարկվում օսմանյան իշխանությունների կողմից հայ բնակչության հաշվառման իրականացման վրա ազդեցություն ունեցած աշխարհագրական, կազմակերպչական և տնտեսական բնույթի գործոնները, որոնք առարկայորեն, այսինքն՝ օսմանյան կենտրոնական իշխանությունների կամքից անկախ, նպաստել են թերհաշվառմանը: Հատկապես կարևորվում է տնտեսական գործոնի դերը, այն է՝ հարկումից, և հատկապես գլխահարկից և 1856 թ. գլխահարկին փոխարինելու եկած «բեղեյ-ի ասկերի» տուրքից խուսափելու հայ բնակչության ձգտումը: Բազմաթիվ օրինակներով ներկայացվում են հաշվառումից խուսափելու համատարած բնույթը և մեխանիզմները:

Գլխի վերջում գետեղվել են օսմանյան վիճակագրական տվյալների համեմատական աղյուսակներ:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Արևմտահայության թվաքանակի վերաբերյալ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1878-1910 թթ. վիճակագրական տվյալները», բաղկացած է երեք ենթագլխից:

«Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական համակարգի ձևավորումը: Արևմտահայության թվաքանակի վերաբերյալ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1878-1910 թթ. վիճակագրությունները» առաջին ենթագլխի սկզբում անդրադառնում ենք 19-րդ դարի երկրորդ կեսին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական համակարգի ձևավորմանը: Փաստվում է, որ Հայոց պատրիարքարանը վիճակագրական տվյալներ էր հավաքում երկու հիմնական եղանակներով: Առաջին դեպքում Պատրիարքարանը հրահանգ էր իջեցնում թեմեր՝ հանձնարարելով թեմի առաջնորդին որոշակի ժամկետներում հավաքել և Կ. Պոլսի ուղարկել թեմի իրավասության տակ գտնվող տարածքի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ, երբեմն նաև այլ բնույթի (եկեղեցիների, վանքերի, կրթական հաստա-

տությունների, աշակերտների թիվ և այլն) վիճակագրական տվյալներ: Երկրորդ եղանակով Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը տվյալներ էր հավաքում հանձնակատարների միջոցով: Այնուհետև մենք ներկայացնում ենք արևմտահայության թվաքանակի վերաբերյալ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1878-1882 թթ. Հայկական հարցի արծարծման համատեքստում կազմած վիճակագրությունները, որոնք են՝ 1878թ. Բեռլինի վեհաժողովին ներկայացված Արևմտյան Հայաստանի բարեփոխումների հայկական նախագծին կից վիճակագրությունը և ծանոթությունը և Պատրիարքարանի՝ 1878-80 թթ. մարդահամարի տվյալները:

Երկրորդ ենթագլխում՝ «**Արևմտահայության թվաքանակի վերաբերյալ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից վիճակագրական տվյալների հավաքումը 1912-14 թթ.:** Պատրիարքարանի՝ 1913-14 թթ. մարդահամարը», ներկայացվում և վերլուծվում են 1912-14 թթ.՝ Հայկական հարցի վերարծարծման պայմաններում Հայոց պատրիարքարանի կողմից հավաքված վիճակագրական տվյալները և կազմված վիճակագրությունները: Անդրադարձ է կատարվում Պատրիարքարանին կից գործող Ապահովության հանձնաժողովի՝ 1912 թ. կազմած վիճակագրությանը: Այնուհետև մանրամասն ներկայացնում ենք Պատրիարքարանի՝ 1913-14 թթ. մարդահամարի կատարման ընթացքը: Փորձ է արվում վերլուծելու 1913-14 թթ. մարդահամարի տվյալների արժեքը՝ որպես աղբյուր Մեծ եղեռնի նախօրյակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ: Այդ նպատակով համադրվում են 1913-14 թթ. մարդահամարի՝ Արևմտյան Հայաստանի նահանգների մի շարք գավառների և գավառակների գյուղացուցակների տվյալները Առաջին աշխարհամարտի տարիներին Մեծ եղեռնը վերապրած արևմտահայ փախստականների կողմից իրենց գյուղերի բնակչության թվաքանակի մասին հաղորդած տվյալների, ինչպես նաև Արևելյան Հայաստանում ապաստանած փախստականների հաշվառման աղյուսքների հետ:

Երրորդ ենթագլուխը կրում է «**Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական համակարգի կողմից արևմտահայության թերիաշվառումը պայմանավորած գործոնները**» խորագիրը: Ատենախոսության այս մասում մենք փորձում ենք սահմանել և վերլուծել Հայոց պատրիարքարանի մարդահամարների իրականացումը խոչընդոտող գործոնները: Երկրորդ գլխի վերջում ևս գետեղված է Պատրիարքարանի տվյալներն ընդհանրացնող համեմատական վիճակագրական աղյուսակ:

Ատենախոսության երրորդ գլուխը, որի խորագիրն է՝ «**Արևմտահայության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արծարծումը 1878-1914 թթ. Հայկական հարցի շուրջ դիվանագիտական գործընթացներում**», կազմված է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արծարծումը հայկական բարեփոխումների հարցի շուրջ 1878-82 թթ. բանակցությունների ընթացքում**», ներկայացվում է 1878-82 թթ. Հայկական հարցի շուրջ ընթացող դիվանագիտական գործընթացներում Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արծարծման պատմությունը: Մասնավորապես, վեր են հանվում բրիտանական դիվանագիտության անդրադարձներն Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի խնդրին, նրա կողմից օսմանյան և հայկական վիճակագրական տվյալների գնահատմանը: Փաստվում է, որ Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցիչները, քննադատելով օսմանյան կառավարության վիճակագրությունը, արևմտահայության թվաքանակի

որոշման խնդրում նախապատվությունը տվեցին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալներին:

«Օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արձարծումը 1912-14 թթ. Հայկական հարցի վերաբացման շրջանում» ենթագլխում խոսվում է 1912-14 թթ. Հայկական հարցի շուրջ ընթացող դիվանագիտական բանակցություններում արևմտահայության թվաքանակի խնդրին անդրադարձների, այդ կապակցությամբ՝ օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալների արձարծման մասին: Ներկայացվում են բարեփոխումների ենթակա տարածքի կառավարման մարմիններում հայկական ներկայացուցչության խնդրի շուրջ ընթացող պայքարը, դրա ընթացքում օսմանյան կառավարության թողարկած կեղծ վիճակագրական տվյալներին հակահարված տալու հայկական կողմի ջանքերը, այդ նպատակով Հայոց պատրիարքարանի և ռուսական դիվանագետների համագործակցությունը:

Եզրակացության մեջ փաստել ենք հետևյալը.

1. 1878 թվականից սկսած, երբ միջազգային դիվանագիտության օրակարգ է մտնում Հայկական հարցը, արևմտահայության թվաքանակի խնդիրը դառնում է քաղաքական առաջնային կարևորություն ունեցող հարց, ինչը պարտադրում է օսմանյան կառավարությանը որդեգրել հակահայկական վիճակագրական և վարչաժողովրդագրական քաղաքականություն, որի հիմնական տարրերն էին.

ա. հայ բնակչության թվաքանակի միտումնավոր նվազ ներկայացնելը (համաձայն 1878-1914 թթ. ընթացքում անցկացված օսմանյան մարդահամարների տվյալների՝ հայերի թիվը կազմում էր 1,000,000-1,300,000 շունչ՝ 1844-78 թթ. նույն օսմանյան տվյալների համեմատ՝ շուրջ երկու անգամ ցածր).

բ. մահմեդական բնակչության թվաքանակի միտումնավոր ուճացումը.

գ. Արևմտյան Հայաստանում վարչական սահմանների վերաձևումը.

դ. Արևմտյան Հայաստանում մահմեդական փախստականների՝ մուհաջիրների բնակեցումը.

ե. մահմեդականների՝ որպես ամբողջական միատարր զանգվածի, հաշվառելը և դրա արդյունքում հայ բնակչությունը՝ որպես փոքրամասնություն ներկայացնելը:

2. Դրա հետ մեկտեղ, օսմանյան վիճակագրության կողմից արևմտահայության թերհաշվառումը պայմանավորված էր նաև տնտեսական, կազմակերպչական, աշխարհագրական (տեղանքային) առարկայական գործոններով, որոնցից ամենակարևորը հարկումից խուսափելու նկատառումով հայերի կողմից իրենց թիվը թաքցնելու միտումն էր:

3. Հայկական հարցի դիվանագիտական գործընթացների հետ կապված՝ մեծ տերություններին Արևմտյան Հայաստանի նահանգների հակադիր վիճակագրություն էր ներկայացնում Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը: 1878-1914թթ. ընթացքում Պատրիարքարանի կողմից Արևմտյան Հայաստանն ամբողջությամբ ընդգրկող հինգ մարդահամարներ և հաշվառումներ են կազմակերպվում. 1) 1878-80թթ. և 1880-81 թթ. (տվյալները, հավանաբար, օգտագործվել են 1912 թ. Ապահովության հանձնաժողովի կողմից մեծ տերություններին ներկայացված բարեփոխումների նախագծին կից 1882 թ. արտացոլող վիճակագրական աղյուսակի պատրաստման համար)՝ պատրիարք Ներսես Վարժապետյանի օրոք, 2) 1902թ.՝ Մաղաքիա Օրմանյանի պատրիարքության շրջանում, 3) 1912թ.՝ Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ և 4) 1913-14թթ.՝ հայկական բարեփոխումների նախագծի շուրջ ընթացող զարգացումներին զուգահեռ: Առանձնակի տեղ է զբաղեցնում 1878թ. Բեռլինի վեհաժողովին ներկայացված Արևմտյան Հայաստանի բարեփոխումների հայկական նախագծին կից վիճակագրական աղյուսակը:

4. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը վիճակագրական տվյալներ էր հավաքում թեմական առաջնորդարանների միջոցով, որոնց տվյալներն իրենց հերթին հիմնված էին քահանաների հարցման, եկեղեցական ծխամատյանների գրառումների վրա: Անհրաժեշտության դեպքում տվյալներ էին հավաքվում նաև տուն առ տուն մարդահամար կատարելու միջոցով: Աղբյուրների ներկա վիճակը թույլ է տալիս արձանագրել, որ երկրորդ եղանակը կիրառվել է հատկապես 1878-80 թթ. և 1913-14 թթ. մարդահամարների ընթացքում:

5. Աբդուլ Համիդ II-ի կառավարությունը խոչընդոտում էր Արևմտյան Հայաստանում մարդահամարներ կազմակերպելու Հայոց պատրիարքարանի աշխատանքներին: Օսմանյան կառավարության հարուցած արգելքներից բացի, ինչպես և օսմանյան կառավարության վիճակագրական համակարգի պարագայում, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից վիճակագրության հավաքման վրա բացասական ազդեցություն էին ունենում նաև առարկայական գործոններ՝ պատճառ դառնալով հայ բնակչության թերհաշվառմանը:

6. 1878-1914 թթ. Հայոց պատրիարքարանի անցկացրած արևմտահայության հաշվառումների և մարդահամարների ժամանակ որոշ շրջանների համար հավաքված տվյալների աղբյուր է ծառայել օսմանյան վիճակագրությունը, ինչը ևս ընդհանուր տվյալի թերի ինելու պատճառ է դարձել:

7. Վերոնշյալ պատճառներով Հայոց պատրիարքարանի՝ 1900-1914 թթ. վերաբերող տարբեր հաշվառումների տվյալները, որոնց համաձայն՝ Օսմանյան կայսրությունում բնակվում էր շուրջ 1,845,450 – 2,026,700 հայ (Արևմտյան Հայաստանի վեց նահանգներ՝ շուրջ 967,500 - 1,163,000, Օսմանյան կայսրության այլ տարածքներ՝ շուրջ 841,000-950,000 հայ), պետք է համարել իրականից ցածր:

8. Այնուամենայնիվ, իրենց թերություններով հանդերձ, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալներն արևմտահայության թվաքանակի ամբողջական ուսումնասիրության համար հիմնական սկզբնաղբյուրն են: Հայոց ցեղապանության նախօրյակին Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ տարածքների հայ բնակչության թվաքանակը ճշտելու համար կարելի է որպես հիմք ընդունել Պատրիարքարանի՝ 1913-14 թթ. մարդահամարի տվյալները՝ համադրելով դրանք իրենց հայրենի բնակավայրերի բնակչության թվաքանակի մասին Մեծ եղեռնը վերապրածների հաղորդվող տեղեկությունների, արևմտահայ փախստականների (գաղթականների) հաշվառման տվյալների և տվյալ ժամանակաշրջանին վերաբերող հայկական օժանդակ այլ սկզբնաղբյուրների տվյալների հետ:

9. Արևմտյան Հայաստանի տարածքում այլ էթնիկ խմբերի նկատմամբ հայերի հարաբերակցության խնդրում մեծ տերությունների դիրքորոշումը կախված էր Հայկական հարցում իրենց ընթացիկ քաղաքական օրակարգից: Այսպես, եթե քաղաքական շահը պահանջում էր ճնշում գործադրել օսմանյան իշխանությունների վրա, ապա օսմանյան վիճակագրական փաստարկները հաշվի չէին առնվում, դրան հակառակ, երբ որևէ մեծ տերություն պատրաստակալ չէր Հայկական հարցում նախաձեռնություն դրսևորելու կամ ընդառաջելու այլ մեծ տերության նախաձեռնությանը, նրա կողմից հրապարակ էր հանվում և շահարկվում Արևմտյան Հայաստանում հայերի փոքրամասնություն կազմելու դրույթը:

10. 1878-82 թթ. Հայկական հարցի համատեքստում օսմանյան կառավարության և Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալները քննության առած Օսմանյան կայսրությունում Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ներկայացուցիչները, քննադատելով օսմանյան վիճակագրությունը, արևմտահայության թվաքանակի որոշման խնդրում նախապատվությունը տալիս են Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալներին:

11. Օսմանյան կառավարության վիճակագրության նկատմամբ մեծ տերությունների անվտանգությունն իր արտահայտությունն է գտնում Կ. Պոլսում նրանց դիվանագիտական ներկայացուցչությունների՝ Հայկական հարցի լուծմանն ուղղված համատեղ հայտարարություններում և նոտաներում: Այսպես, օսմանյան կառավարությանն ուղղված 1880 թ. սեպտեմբերի 7-ի համատեղ նոտայում եվրոպական տերությունները չէին ընդունում օսմանյան վիճակագրական տվյալները՝ որպես իրականությանը համապատասխանող, և կոչ էին անում Բարձր դռանը հնարավորինս կարճ ժամկետներում անաչառ հանձնաժողովի միջոցով և լիակատար անկողմնակալության պայմաններում նոր մարդահամար անցկացնել:

12. 1912-14 թթ. Հայկական հարցի վերաբարձարժման փուլում բարեփոխումների ծրագիրը պաշտպանող Ռուսաստանը հրաժարվում է ճանաչել օսմանյան վիճակագրության արժանահավատությունը՝ նախապատվությունը տալով Հայոց պատրիարքարանի տվյալներին: Եվրոպական վերատեսուչների վերահսկողության տակ Արևմտյան Հայաստանում մարդահամար անցկացնելու դրույթ է պարունակում 1914թ. հունվարի 26-ի (փետրվարի 8) հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Անգլիական դիվանագիտությունը և Արևմտյան Հայաստանում հայ բնակչության թվաքանակի հարցը (XIX դարի 60-90-ական թթ.), «Երիտասարդ արևելագետների հանրապետական XXIII գիտական նստաշրջան, գեկուցումների թեզեր», Երևան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստ., 2002, էջ 17-20:
2. Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Օսմանյան կայսրությունում հայ բնակչության թվաքանակի խնդիրը թուրքական պատմագրության մեջ, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», № 5, 2002, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., էջ 116-125:
3. Վիճակագրական տվյալները Վանի նահանգի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ 1878-1914թթ. (աղբյուրների համադրության և վերլուծության փորձ), «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», № 7, 2003, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., էջ 65-79:
4. Էրզրումի նահանգի հայ բնակչության թվաքանակը Մեծ Եղեռնի նախօրյակին (աղբյուրների համեմատական վերլուծության փորձ), «Ցեղասպանագիտական հանդես», № 2, 2014, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., էջ 31-57:

ТАТОЯН РОБЕРТ АРАМАИСОВИЧ

СТАТИСТИЧЕСКИЕ ДАННЫЕ ОСМАНСКОГО ПРАВИТЕЛЬСТВА И КОНСТАНТИНОПОЛЬСКОГО АРМЯНСКОГО ПАТРИАРХАТА ПО ЧИСЛЕННОСТИ ЗАПАДНОАРМЯНСКОГО НАСЕЛЕНИЯ В КОНТЕКСТЕ АРМЯНСКОГО ВОПРОСА (1878-1914 гг.)

*Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по
специальности 07.00.01 “История Армении”*

*Защита состоится 19-ого мая 2015 г., в 14⁰⁰, на заседании специализированного
совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019,
Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).*

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию статистических данных османского правительства и Константинопольского армянского патриархата по численности армянского населения Западной Армении в контексте процессов вокруг Армянского вопроса в 1878-1914 гг.

После того, как османское правительство согласно 61-ой статье Берлинского трактата взяло на себя обязательство «осуществить, без дальнейшего замедления, улучшения и реформы, вызываемые местными потребностями в областях, населенных армянами», султан Абдул Гамид II, а затем и младотурецкое правительство, публикуя все новые и новые статистические данные, пытались убедить великие державы, которые являлись гарантами осуществления реформ, что «армянонаселенных областей» в Османской империи не существует, армяне в «восточных вилайетах» составляют меньшинство. В свою очередь, Константинопольский армянский патриархат противодействовал этим утверждениям, представляя собственную статистику численности западных армян и этнического состава населения вилайетов Западной Армении.

Острая полемика, развернувшаяся в 1878-1914 гг. вокруг вопроса численности западноармянского населения и, в этой связи, достоверности османских и армянских статистических данных, некоторыми исследователями была охарактеризована как «статистическая война». Проявления борьбы вокруг данного вопроса отмечаются и после завершения Первой мировой войны – во время переговоров в Париже, Севре и Лозанне вокруг заключения мирного договора. После того, как Армянский вопрос был снят с повестки дня международной дипломатии, вопрос численности западноармянского населения сохранил свое значение в связи с научной и политической полемикой вокруг вопроса числа жертв Геноцида армян.

В 1878-1914 гг. лишь два органа – османское правительство и Константинопольский армянский патриархат – в силу своих полномочий могли и, главное, имели практические рычаги последовательно и наиболее всеобъемлющим образом заниматься сбором статистических сведений о численности западноармянского населения, т.е. осуществлять на территории Западной Армении и других областях Османской империи переписи населения. В этом отношении, всестороннее исследование статистических данных османского правительства и Константинопольского армянского патриархата в контексте Армянского вопроса

является актуальным с точки зрения освещения противоречивых, сложных и запутанных проблем, связанных с численностью армянского населения Османской империи накануне Геноцида армян, уточнения количества жертв Геноцида армян, а также выявления статистической и административно-демографической составляющей антиармянской политики Османского государства.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений.

Во введении обосновывается научное значение и актуальность темы, цели и задачи, научная новизна и прикладное значение исследования, представлен обзор источников и литературы.

В главе первой - «Армянский вопрос и статистика османского правительства по численности западноармянского населения», представлены и проанализированы данные переписей населения османского правительства с 1830-х гг. по 1914 г. по численности армянского населения Османской империи и, в частности, Западной Армении. Освещена статистическая и административно-демографическая политика Абдул-Гамида II и младотурецкого правительства в Западной Армении, целью которой было снижение численности армянского населения, как на бумаге, так и в действительности. Также определены и проанализированы факторы, объективно влиявшие на осуществление учета армянского населения и способствовавшие занижению реальной численности армян. Особое внимание уделяется экономическому фактору – стремлению армянского населения избежать учета с целью уклонения от подушной военной подати (бедел-и аскерие).

Во второй главе, озаглавленной «Статистические данные Константинопольского армянского патриархата 1878-1914 гг. по численности западноармянского населения», представлены и проанализированы основные статистические сведения по численности армян Западной Армении и всей Османской империи, собранные и опубликованные Константинопольским армянским патриархатом в 1878-1914 гг. Подробно освещен ход проведения организованных Патриархией переписей армянского населения Османской империи в 1878-80 и 1913-14 гг. (содержание опросных листов, данные об исполнителях, препятствия османских властей, трудности в ходе осуществления переписи и т.д.), анализируется ценность данных в качестве источника по численности армянского населения данного времени. Как и в случае с данными османского правительства, мы попытались определить и проанализировать факторы, влиявшие на результат собираемых Константинопольской армянской патриархией статистических данных.

Третья глава носит заглавие «Статистические данные османского правительства и Константинопольского армянского патриархата по численности западноармянского населения в дипломатических процессах вокруг Армянского вопроса в 1878-1914 гг.». В ней освещена история обсуждения проблемы численности армянского населения и в связи с этим, османских и армянских статистических данных, международной дипломатией в периоде между 1878 и 1914 годами. Особое внимание обращено на начальный и конечный этапы обострения Армянского вопроса в 1878-82 и 1912-14 гг., когда в контексте переговоров вокруг проекта реформ, вопросы численности армянского населения Западной Армении, его соотношения с другими этническими группами и, соответственно, степени достоверности предоставленных османским правительством и Константинопольским армянским патриархатом статистических данных, приобретали серьезное значение.

В заключении обобщаются основные выводы и положения исследования.

TATOYAN ROBERT ARAMAYIS

STATISTICS OF THE OTTOMAN GOVERNMENT AND THE ARMENIAN PATRIARCHATE OF CONSTANTINOPLE ON THE NUMBER OF THE WESTERN ARMENIAN POPULATION IN THE CONTEXT OF THE ARMENIAN QUESTION (1878-1914)

Dissertation for the degree of the candidate of the historical sciences on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on May 19, 2015, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

This dissertation explores the statistics of the Ottoman government and the Armenian Patriarchate of Constantinople on the Armenian population of Western Armenia in the context of the processes around the Armenian question from 1878 to 1914.

As the Ottoman government, according to the 61st article of the Berlin Treaty, undertook "to carry out, without further delay, the improvements and reforms demanded by local requirements in the provinces inhabited by Armenians", the sultan Abdul Hamid II and the successive Young Turkish government by publishing more and more statistical data, tried to demonstrate to the great powers, the guarantors of the implementation of the Armenian reforms, that there are no "Armenian-inhabited provinces" in the Ottoman Empire and the Armenians in the "eastern vilayets" are a minority. The Armenian Patriarchate of Constantinople opposed to these claims by presenting its own estimates of the number of Western Armenians and the ethnic composition of the vilayets of Western Armenia.

The intense debate unfolded in the 1878-1914 on the issue of the number of Western Armenian population and, in this context, on the reliability of the Ottoman and Armenian statistical data has been described as a "statistical war" by some researchers. The manifestations of this controversy were observed even after the end of the First World War - during peace negotiations in Paris, Sevres and Lausanne. After the Armenian question was removed from the agenda of international diplomacy, the question of the number of Western Armenian population has retained its importance in relation to the scientific and political controversy on the issue of the number of victims of the Armenian Genocide.

In the 1878-1914 only two bodies - the Ottoman government and the Armenian Patriarchate of Constantinople, in virtue of their offices, were able and, most importantly, had important practical levers to collect statistics on the number of Western Armenian population consistently and in most comprehensive way, i.e. to carry out censuses in the territory of Western Armenia, and in other areas of the Ottoman Empire. In this regard, a comprehensive study of the statistics of the Ottoman government and the Armenian Patriarchate of Constantinople in the context of the Armenian question is relevant in terms of coverage of controversial, complex and intricate problems associated with the number of the Ottoman Armenians on the eve of the Armenian Genocide, counting the number of deaths of Armenian people as a result of the Armenian Genocide, as well as identifying statistical, administrative and demographic components of the anti-Armenian policy of the Ottoman

state.

The dissertation consists of the preface, three chapters, summary, the list of the used sources and literature and appendices.

The introduction presents the scientific importance and relevance of the theme, aims and objectives, methodology, scientific originality and practical applicability of research, and the overview of sources and literature.

The first chapter is entitled “The Armenian Question and the Ottoman government statistics on the number of the Western Armenian population”. It analyzes the Ottoman government census data on the number of the Armenian population of the Ottoman Empire and, in particular, of the Western Armenia from 1830 to 1914. We outline the statistical, administrative and demographic policy of sultan Abdul Hamid II and the Young Turkish government in Western Armenia, which was aimed at reducing the number of Armenian population both on paper and in reality. We also identify and analyze the factors, which affected the registration of the Armenian population and contributed to undercounting of the Western Armenians. Particular attention is paid to the economic factor - the desire of the Armenian population to avoid accounting to evade the poll-tax (*bed-i askeri*).

The second chapter is entitled “Statistical data of the Armenian Patriarchate of Constantinople of 1878-1914 on the number of Western Armenian population”. It analyzes the main statistical figures on the number of Western Armenian population, collected and published by Armenian Patriarchate of Constantinople in 1878-1914. The course of the Ottoman Armenian population censuses in 1878-80 and 1913-14 organized by Patriarchate is covered in detail (content of the questionnaires, data about executors, obstacles by the Ottoman authorities, difficulties, etc.), the value of data as a source for the determination of the number of the Armenian population for the period in question is analyzed. As is the case with the Ottoman government statistics, we have attempted to identify and analyze the factors which had impact on the collection of statistical data by the Armenian Patriarchate of Constantinople.

The third chapter with the title “The statistics of the Ottoman government and the Armenian Patriarchate of Constantinople on the number of Western Armenian population in diplomatic processes around the Armenian Question in 1878-1914” covers the history of the discussion on the problem of the Armenian population, and therefore, the Ottoman and Armenian statistics, in the international diplomacy for the period between 1878 and 1914. Particular attention is paid to the initial (1878-82) and final stages (1912-14) of the aggravation of the Armenian question, when in the context of negotiations on the Armenian reform package, the issues of Armenian population of Western Armenia, its ratio to other ethnic groups and, consequently, the degree of reliability of statistics, provided by the Ottoman government and the Armenian Patriarchate of Constantinople, acquired a great importance.

The main findings and results of the study are summarized in the conclusion.